

Կ Ա Պ Բ Ռ Ն Ո Ղ Ը

Յուզիսի սկզբներին Կաթնաշէն գիւղը մեռելային կերպարանք է ստանում. փողոցներում բացի հաւից-ձիւից ուրիշ ոչ մի կենդանի արարած չի երևում. կանայք շուաքի տակ քաշուած գործում են կամ մանում, իսկ երեխաները լողանում են գետի մէջ: Ամեն ինչ խղիւս է տալիս արեգակի պարող ճառագայթներից, ամեն ինչ օթեան է փնտռում փոքր ինչ զովանալու համար: Գիւղում տղամարդ չի երեւում: Ղուլունց պատի տակի շուաքում միայն շարուած են մի քանի անգործ ծերունիներ, որոնք սովորաբար խօսում են վերջին հեղեղների կամ քաղաքից ստացուած նոր լուրերի մասին:

Գիւղը դատարկ է. գիւղում «փափախաւոր» չի երևում:
—Ո՛ւր է ձեր տղամարդը,—կը հարցնես մի օր և իցէ

Մարիամ աբօր:

—Սարին է,—կը լինի նրա պատասխանը,—ի՛նչ ես հարցնում. մի՞թէ այսօրոգայ օրը տղամարդը տանը կը նըստի,—կաւելացնի նա:

Եւ իրաւ գիւղացին տարուայ այդ միջոցին «հարամ» կը համարի իր կերածը, եթէ պարապ տանը նստի: Նա դուրս է գալիս դաշար. նրա գործունէութեան անպարէզը այդ ժամանակ տանից դուրս հեռու դաշտումը կամ սարին է:

Ամբողջ գիւղը բարձրանում է կանաչազարդ լեռները, սարը. այնտեղ խոտի հունձ է: Իւրաքանչիւր գիւղացի շտապում է հայթայթել իր «աչքի լիս» ու հաւատարիմ ընկեր անասունի ամբողջ տարուայ ապրուստը:

Անցնենք սարը:

Այստեղ ասեղ գցելու տեղ չը կայ. գիւղի թէ մեծ, թէ փոքր իրանց բեռնակիր ձիւաների ու ջորիների հետ միասին այստեղ են ժողովուած: Վերջիններիս բաղմաթիւ երամ-

ները ծածկել են լայնածաւալ արօտատեղերը: Սրանց խոր-
ինջոցը, միանալով հարիւրաւոր գեղըուկների բարձրաձայն
աղաղակների հետ, ականջ է խլացնում: Գիւղացիները, գե-
րանդիներով զինաւորուած, այս ու այն բլուրի գլխին
խմբուած, տաք վիճաբանութիւններ են բանում իրար մէջ
խոտի բաժանման մասին: Աւելորդ է ասել, որ նրանց վի-
ճաբանութիւնները համեմուտ են ամենընտիր յիշոցներով:
Պատահում է, որ միմեանց վրայ գերանդի են բարձրացնում,
բայց դրա հետեանքը հեռու չի անցնում: Յիշոցները գլխ-
աւելորդապէս ուղղուած են լինում խոտերը բաժանողի հաս-
ցէին: Աերջինս խոտի հնձից մի շաբաթ առաջ «ընտրուում»
է ամբողջ համայնքից, — ընտրողները իսկապէս տանուտէրե-
ու մի քանի աղսախկալներ են լինում, — ու մի որ և է գրա-
գէտի ուղեկցութեամբ գնում է սարը խոտատեղերը գիւղի
ծխերի մէջ բաժանելու: Սարի այն մասը, որը յատկացրած
է լինում խոտերին և որն անարատ է մնում մինչև խոտի
հունձը, բաժանուում է մի քանի գլխաւոր մասերի: Բաժին-
ների թուին համեմատ կազմում են բաժանաթղթեր, որոնց
մէջ որոշուում են իւրաքանչիւր բաժնի սահմաններն ու տա-
րածութիւնը: Բաժանաթղթերի թուի համեմատ կազմում
են ծխերի, այսինքն աների, ցուցակներ ու այդպիսով իւ-
րաքանչիւր խոտաբաժին ընկնում է տասը կամ քսան տանէ
Աերջիններս կամ միասին հնձում են խոտը ու հնձածը բա-
ժանում, կամ բաժանում են իրար մէջ ընդհանուր խոտաբա-
ժինը ու առանձին հնձում: Ընդհանուր բաժինները վիճակ
են գցւում աների մէջ, կամ թէ, ինչպէս գիւղացիներն են
ասում, ծեղ են գցւում, այդ պատճառով էլ բաժանաթուղ-
թը կոչւում է «ծեղ»:

Կաթնաշէնում խոտերի բաժանող համարեա ամեն տա-
րի սովորաբար ընտրուում է Սեւանց Եղին: Սրան ի պատիւ
ծերութեան բոլորն էլ Եղի ամի են ասում: Գիւղացիները
թէև մի առանձին համակրանք չեն զգում դէպի նա, բայց
այնուամենայնիւ էլ գործ չի լինում, որ Եղի ամու ձեռքովը
չանցնի, էլ բան չի մնում, որ նրա մատը խառը չը լինի
մէջը: Պրիստաւ կամ գաւառապետ եկած ժամանակ Եղի ա-
մին է գիւղացիներին ապարդ երես անում: աղի առաջին շը-
նորհիւ իւր ճարտարախօսութեան, մի որ և է խաթա (աղէտ)

է պատահում, Եղի ամին է նրանց կապը բռնում ու ուղիղ ճանապարհ դուրս բերում: Շատ եռանդուն ու փորձուած «կապ բռնող» ¹⁾ է Եղի ամին և հէնց շնորհիւ իր այդ փորձառութեան է կարողանում կաթնէնցոյ պէս ինքնագլուխ ու անհնազանդ մարդկանց կապը իր ձեռքում պահել միշտ: Խոտերը բաժանելիս Եղի ամին իրան մի առանձին ձանձրութիւն չի պատճառում երբէք. նա այնքան փորձուած մարդ է այդ բանում, որ բոլորովին աւելորդ է համարում խոտաւորները շրջելու վատից ջոկելու համար: Սովորաբար բարձրանում է մի որ և է լեռան գագաթ, այնտեղից դիտում խոտերի ամբողջ տարածութիւնը ու որոշում բաժինների սահմանները: «Գրի, ադա», — ասում է նա գրագրին ու սկսում թելադրել բաժանաթղթերը, ծեղերը: Երբեմն պատահում է, որ գրագիրը մի որ և իցէ նկատողութիւն է տնում Եղի ամուն, ասելով, որ այս ինչ բաժինը շատ փոքր է, կամ թէ այնտեղ խոտ քիչ կայ:

— Է՛, հա՛ երանի իմ էս կատարիս, որ դու պտես ինձ խելք սովրեցնիլ, — պատասխանում է նրան արհամարհանքով Եղի ամին, — դու գրի, ինչ որ ես ասում եմ, բո բանը ղալամի ²⁾ ճամուցն է: Երէկ-մէկէլ օրը դու այսքան փոքր երեխայ էիր, հիմա մի-երկու այիւր-բէն ես սովորել, գիտես, թէ մեծ մարդ ես դարձել, որ իմ խելքի կտրածին հաւան չես կենում:

— Եղի ամի, ահա անցեալ տարի այդ բաժինը մեզ ընկաւ, խոտ չի կար, բոլորովին մաղբուն մնացինք ³⁾: Հիմա էլ մի որ և իցէ խելքի կընկնի, ճարը կտրած խոտ բաժանողին ուշուց կը տայ: Մեծ մարդ ես, արի այդպէս մի անիւր. հոգիդ խելք ա, այսօր-վաղը մեռնելու ես, հէնց արա, որ քեզ ողորմի ասող լինի: Եկ ինձ լսիր, այն երեւացող ձորամէջն էլ այդ բաժնի հետ գցիր. այնտեղ լաւ խոտ կայ. այնցեալ շաբաթ ես ինքս այնտեղ եղել եմ ու բոլոր խոտերը լաւ զննել:

— Ձէնդ կտրի, խէվ հարամ զադա ⁴⁾. գնա այդ քո

¹⁾ Հասարակական գործիչ, ղեկավար:

²⁾ Գրչի:

³⁾ Զրկուեցինք:

⁴⁾ Յիմարի որդի:

վարժապետին սովորացրու։ Դէ՛ Տէր-Պետրոս, եկ ամեն օր մեզ եկե՞ծումը ¹⁾ բարոզ տուր, —ասում է նա ինքն իրան, — թէ շէօլ բաց արէք, վարժապետ բերել տուէք։ Երէցին լըսում ենք, շէօլ բաց անում, վարժապետ բերել տալի, Զահիլ-Ջհուլը գնում է այլեւ-բէնի հոան առնում ու գալի մեզ խելք սովորացնում։ Ահր ըսէնք բան կը լինի, երկիր-աշխարհ ըսէնք բան տեսել ա՛։ Սրա չափ վախտս (ցոյց է տալիս նա դէպի գրագիրը) ո՞վ կը համարձակուէր իրանից մեծին ասել, թէ աչքիդ վերին ունք կայ։ Ինչ հողը գլխիդ տաս, որ հիմա բոլորն էլ Տէր-Պետրոսի խօսքովն են բան բռնում ու իրանց տներն իրանց ձեռքով բանդում։ Գրի, ադա, գրի, — դառնում է նա դէպի գրագիրը, — քեզ ինչ ասեմ։ Դու մեղաւոր չես։ Աստուած Տէր-Պետրոսի ու քո վարժապետի աները քանդի. գրի, — կրկնում է Եղի ամին ու բռնութիւն ախորժակով վեր ծծում։

— Եղի ամի, հիմա ինչ որ է, այդ թող իրան կենայ. աւի՛ր՝ այս մի բանումն ինձ լսիր, ձորամէջը այս բաժնի հետ գցի։ Խեղճ ա դորա տէրը, նա էլ քեզ պէս թագաւորին հարկ ա տալիս, նա էլ քեզ պէս առանց հայվան ²⁾ ապրել չի կարող, նրան էլ հարկաւոր է խոտ։

— Ադա՛, ա թուրքի հանք, ահր բաւական է, ինչքան զահէս տարար, ասելը մին կը լինի, երկու կը լինի. հոգիս թող հանգիստ իր տեղը կենայ, ինձ մեղքի տակ մի գցի՛ր, Վարդավառին պիտի հաղորդուեմ, ա՛ քո . . . Տէր, մեղայ քեզ Աստուած, բերանս ինչ ա գալիս . . . :

— Ահր ձորամէջն ինչու ես ղրաղ ³⁾ դնում, պատճառն ինչ ա, միթէ նա գիւղին չի պատկանում, — տաքանում է գրագիրը, Եղի ամուց իր մօր հասցէին մի ոչ այնքան դիւրեկան հաճոյախօսութիւն լսելով, — ի՛նչու համար ես ուզում դու այդ ձորամէջը ուրիշ բաժնի վրայ դնել, բանի որ նա այդ բաժնին է կպած։

— Ձորամէջը ոչ մի բաժնի վրայ չեմ դնում, — պատասխանում է համբերութիւնը հասած Եղի ամին, — այդ ըն-

¹⁾ Եկեղեցում։

²⁾ Անտուռ։

³⁾ Մի կողմ։

հէնց իմ յօժար կամբով շրաղ եմ դնում միայն Սարգիս-բե-
գի ու ստարշինի ¹⁾ համար: Շինիս աչքը, լըսն ու զար-
դարանքը նրանք են, ա՛ որդի. պէտք ա մեծից սկսած մինչև
փոքր ամեն բանում նրանց շահենք, նրանց խաթրն առնենք:
Դու դեռ երեկ-մէկէլ օրուայ երեխան ես, դեռ քեօրփա ²⁾
ու ջահիլ ես, սեն ու սպիտակը դեռ իրարից չես ջնկում.
դու ինչպէս կարող ես իմանալ այդ մարդկանց զարդ ³⁾:
Քո վարժապետը թող գայ դեռ առաջ ինձանից դաս առ-
նի ու յետոյ ձեզ բէն-այիւ-բա, բէն-եչ-բէ սովորեցնի:

Խեղճ գրագիրը, լսելով Եղի ամուսուլած անուաները,
երկիւղածութեամբ կծում է պռօշը ու կրկին շարունակում
սուս ու փուս ճումառացնել՝ գրիչը:

Բլուրներն աւելի ու աւելի են սւևանում. գիւղից նոր
և նոր խմբեր են գալիս: Սարը կենք ու կենդանութիւն է
սաանում. ուր դարձնես հայեացքդ, ամեն տեղ գիւղացիների
ստուար խմբեր կը նկատես: Մի տեղ շարունակում են տաք
վիճաբանութիւնները, մի ուրիշ տեղ կէսօրելու են ժողո-
վուել: Սրանցից որը քնած է, որը գերանդին է սարքում,
սրում, որը Եղի ամուսն է բամբասում: Խոտ հնձող դեռ
ոչ մի տեղ չի երևում. հնձի առաջին օրը սովորաբար անց
է կենում այդ վիճաբանութիւնների, բամբասանքների, կամ
լսա գիւղացոց «ղորոցի» մէջ:

— Եարաք ⁴⁾ մենք այդ քեօփակից ⁵⁾ ե՞րբ պէտք է
պրծնենք, — ասում է Բաղունց Կարապետը, — շէնս դա բան-
դեց, բարուբանդ արաւ: Բա մենք խեղճ չենք, մեղք չենք,
մեզ Աստուած չի ստեղծել, մենք թագաւորի ընհաթ ⁶⁾
չենք: Ե՞րբ պտի շէնս այդ մարդակերների ճանկերից դուրս
գայ, ե՞րբ պտի մեր հացը հալալուիլ: Կալի հողումը խոտ
կայ, որ այնտեղը Սևունց Եղին տասնութ տան է տուել,
թէ գնացէք, հնձեցէք: Ահր ես ընտեղ ինչ հնձեմ, ուր մի

¹⁾ Յանուաւերի:

²⁾ Կաթնակեր:

³⁾ Պատիւը:

⁴⁾ Արդեօք:

⁵⁾ Ետերունուց:

⁶⁾ Հարկատու հպատակ:

ծեղ, մի չոփ չես գտնիլ, թէ աչքդ կոխես: Ըսհէնց բան կը լինի, ա' խալիսը (ժողովուրդ), ըսհէնց լին ու մասխարութիւն կը լինի: Կալի հողը ե՞րբ է ղուրուղչի ¹⁾ երես տեսել: Զատիկիցն սկսած մինչև օրս այնտեղ Սարգիս-բէգի ոչխարներն ու ձիաներն են արածելիս ըլել, իսկ հիմա Սեւունց Եղին Յուրա աղբրի ձորամէջի կառաղած խոտերը նըրան ու ստարշինին է տուել ու ինձ տասնութ տան հետ ուղարկել Կալի հողը, թէ՛ Կարապետ, գնա՛ ընտեղ խոտ հնձի: Ահր Կարապետը բեղ թաղի, Սեւունց Եղի, Կալի հողումը խոտ կայ, որ նա գնայ հնձի: Մարդ անաստուած կը լինի, այդքան էլ կը լինի: Չեմ իմանում այդ քեօփակին ով ա վաքիլ ²⁾ ջոկում, թէ՛ գնա՛ խոտերը բաժանի: Էսօր քսան—երեսուն տարի է, ինչ աչքս բաց եմ արել. ամեն տարի այս բանը դրա ձեռքովն է անց կենում ու ամեն տարի միջի մաղբունը ինձ պէս բեասիրն ³⁾ է մնում:

—Ո՞նց թա ով ա դրան ջոկում, մի՞թէ չես իմանում, — խօսում է Վարանանց Թուռին:— Երբ մենք դէս ու դէն ցըրուած ամենքս մեր բեասիրութիւնին ենք գնում, Սարգիս-բէգն ու ստարշինը Եղինն աչքով-ուշքով են անում ու դէպի սարը ճանապարհ գցում. յետոյ մի բանի իրանց իմացած մարդկանց ասում են, թէ Սեւունց Եղինն ուղարկել ենք սարը խոտերը բաժանելու: Այդ մարդիկն էլ, որոնք սաղ տարին շինիս մեծերի չորս կողմն են շուռ գալիս, ասում են. «չաա լաւ էք արել. Եղին է, որ խոտերի ժամանակ կարգ, կանոն է պահպանում. եթէ նա չը լինի, իւրաքանչիւր տարի արիւնհեղութիւն կը պատահի սարին»: Եւ այդպիսով Եղին դառնում ամբողջ շինի վաքիլ, հասարակի ⁴⁾ կողմից ընտրուած ու յետոյ իր խելքի կտրածն է անում. այդպիսով Սեւունց Եղին մեզ էլ շինած, մեր կապը միշտ իր ձեռքումն է պահում:

—Դրուստ ես ասում, ա' Թուն, դրուստ, — մէջ է մըտնում Խալփանց Դաւիթը, — շինիս ո՞ր բանը չի ընդհէնց

¹⁾ Խոտերի պահպան:

²⁾ Լիազօր:

³⁾ Աղքատ:

⁴⁾ Հասարակութեան, համայնքի:

անցնում: Որ մենակ խոտերի բաժանելը լինի, դա գլուխը բարը, եօլա կը գնայ: Թէ խոտ, Թէ հանդ, — ամեն բան այդ մարդկանց ձեռովն է անցկենում, իսկ մէջ տեղը մեր տունն է բանդւում, մենք ենք զրկւում, կուժն ու կուլէն վերջը մեր գլխին է կոտրւում: Ի՞նչ անես, ձեռուքդ ի՞նչ է գալիս: ոչ գիր ենք գիտում, ոչ ղալամ: Հայվան մարդիկ ենք: Որ շլապկաւորի հետ խօսում ենք, ձեռաց 1) զակւօնից ու մեծաւորից է խաբար տալիս ու աչքերնիս կապում: Երբն սուղիբքն ու իշխաններն էլ հօ մեր միսն է մնացել, որ ուտեն: Էլի մեղայ շլապկաւորներին, ոչ մեղայ դրանց: Սովի տարին ամբողջ երկու ամիս տանով-տեղով չարչարուեցի, շան օր, շան հալ բաշեցի, Լալուկ բարի գլխին մի հողխըմհատ 2) արի ու վարեցի: Առաջի տարին այնքան էլ չեկաւ, բայց երկրորդ տարին հողս կատաղեց: Էն տարին իմ տունը համարեա Թէ նա պահեց: Էս որ տեսաւ Շարմաղանց Ստեփանը, ատամները սրեց: Ինքը սուղիա լինելով, ստարշինի հետ խօսքը մին արաւ ու մի կիրակի օր եխծի դռանը յայտնեց խալխին, Թէ Խալփանց Դաւթի Լալուկ բարի գլխի հողն էլ պէտք ա ուրիշ վարելահողերի հետ բաժին դնուի ու ծեղ գցուի: ում որ ընկնի, Թող նա գնայ վարի: — Ադա՛, Ստեփան, այդ ո՞նց հող ա, որ դու ուզում ես բաժին դրնել, — ասացի ես, — ո՞վ է ինձանից առաջ այնտեղ վար արել, ո՞վ է սերմ գցել: Անվերի բօլ 3) ա ըլել, ես եմ խմհատ արել: տանով — տեղով, սոված-ծարաւ արին բրտինք եմ Թափել վրան, իսկ հիմա դու ուզում ես ձեռքիցս խլել: Բա քեզ Աստուած չունես, խեղճ չեն իմ խիղանը 4), էս եխծէն էլա վախում չե՞ս: — Ո՞վ ա ասում խմհատ ես արել, ո՞ւմ գլուխ ես ուզում կապել, — պատասխանեց Ստեփանը, — երկու բար ես դէն ձգել ու մի արմատ պոկել — խմհատ ես

1) Իսկոյն:

2) Խմհատ անել՝ կը նշանակի հողը մաքրել Թփերից, արմատներից ու այգալիսով պիտանի դարձնել վարելու համար: Խմհատը մնում է միշտ տիրջ սեպհանուլթիւն ու երբեք ուրիշ համայնական վարելահողերի հետ բաժին չի գնւում:

3) Վայրենի անտառ:

4) Երեխաները:

արե՛լ: Որ ըսէնց ա՛, ես էլ կը գնամ Չոփուրանց երկու-
թևի ¹⁾ հաշա-կաղնին պոկեմ ու հողը վարեմ և յետոյ
ասեմ, թէ նա իմ խմհաան ա, թող չեմ անիլ, որ հասա-
րակի հողերի հետ բաժին դնուի: Խալիսը ծիծաղեց: Ստե-
փանը ինքնաբաւականութեամբ դարձաւ դէպի գրագիրը, ա-
սելով. «այա՛, գրի՛, գրի՛ Խալիանց Դաւթի Լալուկ քարի
գլխի հողը»:—Ի՛նչ,— հարցրեց գրագիրը,— հողը, թէ խըմ-
հաար:— Հողը,— պատասխանեց բարկութեամբ Ստեփանը,—
խուլ ե՛ր, լսեցիր ոչ, որ ասացինք, թէ նա ընտել խմհաա
չի արե՛լ: Գրագիրը գրեց սուղիի ասածը: Մի շաբթից յե-
տոյ Սևունց Եղին բարձրացաւ սարը հողերը բաժանելու.
ծեղ գցեց,— Աստուած ինքն այն ծեղ համարի,— ու խըմ-
հաաս ընկաւ Շարմաղանց Ստեփանին: Էս օր թամամ երեք
աարի ա, ինչ նա խմհաաս վարում ա, ինչ նրա հացն ա
ուտում: Իսկ ես փափախս աչքերս գցած, ձեռս ծոցումս
դրած ամեն կիրակի գնում եմ եկածի դռանը կանգնում, թէ
տեսնեմ երբ է Սևունց Եղին հողերը բաժանելու և ինձ
ինչ բաժին է տալու, որ գնամ վարեմ:

— Սևունց Եղին.... Աստուած Սևունց Եղիի տունը
բանդի,— խօսում է կրկին Բաղունց Կարապետը,— այդ բե-
փակը որ Աստուածանից չը վախի, մեղի եսիր ²⁾ կը աանի,
դուք ի՛նչ էք գիտում: Լաւ դա ու Յէր-Մսէսանց Մինասը
չէին, որ կուռի տարին Աւագանց Մաթոսի թևի տակը մը-
տած ուղում էին նրան իր եղբորտանցով բէգութիւն տան,
շինիս վրայ տէր շինին:

— Կարապետ, դու լաւ կիմանաս, Մաթոսը դրանց ի՛նչ
էր տուել, որ այդ բեփականները նրա համար այնքան տա-
փերը պոկում էին ³⁾,— հարցնում է Վարանանց Թունին:

— Մնց թա ինչ էր տուել, խի գիտում չե՛ս: Մաթոսը
ակռօժնի սուղումը ղուլլող ⁴⁾ էր անում, Եղին ու Մի-
նասն էլ նազար-բէգի հետ տափի դաւի ⁵⁾ ունէին. Աստու-

¹⁾ Երկու թևի-երկու կողմից վարուող հող:

²⁾ Գերի:

³⁾ Աշխատում էին:

⁴⁾ Ծառայում էր:

⁵⁾ Վէճ:

ծուօրն ակռօծնումն էին մթնացնում ու Մաթոսի տանը։
Շէնս որ բանդէիր, ոչ Մինաս կը գտնէիր, ոչ Եղի,—հա-
րիրդա շհարներում ¹⁾ կորած էին լինում։ Մաթոսը դրան-
ցից կերաւ, կերաւ, յետոյ միտք արաւ՝ «այս մարդիկը շի-
նի իշխաններ են, ինձ մօտ գործ ունին, սրանցով կարելի
է մեծ բան ձեռք բերել»։ Ասելն ու սկսելը մին արաւ. սկը-
սեց ինքը նրանց ուտացնել, խմացնել, նրանց համար մուհտայ
աավկատուութիւն անել ու ըստէնց անելով մեր պարուն Մաթոսը
կամաց-կամաց իր միտքը նրանց բաց արաւ։ Թէև դժուար էր նը-
րանց համար այդ բանը գլուխ բերել, բայց ճար չի կար,
վիզ կալան։ Էն տարին էլ հօ, ա՛ Թուն, շէնս կամորան էին
գրում, այդ դու գիտես։

—Բա, ոնց չեմ գիտում. էն որ հաչա-սախկալը եկաւ
շէնս, սուգիաներին թակեց, ստարշինին տուն գցեց, Եալ-
ղշլաղեցի Հասան-բէգին բխովեց ²⁾ թա գող ա պահում։

—Հա՛, հա՛. ապրես, ըղորմի բո հօրը, հէնց էն տարին
Մեծաւորը երբ եկաւ աները գրելու, Եղին ու Մինասը, իբ-
րև շինի իշխաններ, կանգնեցին, թէ Աւագանք տերաւորի
թոռներ են. նրանք պէտք ա ըստթի շարքէն հանուեն ու
ազնուականների շարքումը գրուեն։ Մեծաւորը, Աստուած
նրա որդիքը պահի, մի լաւ, հալալ բրիստոնեսյ մարդ էր,
ասաց, որ միայն իշխանների խօսքով ես այդպիսի բան չեմ
անիլ. թող գիւղացիք բոլորն էլ իրանցից մի պրիգօվօր ³⁾
տան, թէ իրանք համաձայն են նրանց բէգութեանը։ Այս
որ լսեց Մաթոսը, Եղիի ու Մինասի հետ միասին ընկաւ
շէնս, որ ոնց որի ա պրիգօվօրը շինի Մինին խաբելով,
միւսին մի զատ տալով, մէկալին վախեցնելով, Մաթոսը վեր-
ջապէս պրիգօվօրը շինեց։

—Խափե՛լ ես ասում, բաց թողնում,—ընդհատում է
նրան Խալիանց Դաւիթը,—ինձ եկաւ ասեց. «Դաւիթ,
թողութ ենք շինում առաջնորդին ուղարկենք, որ մեր շիօ-
լի համար վարժապետ նշանակի. եկ սրան դու էլ ձեռք
քաշի»։ Չեռքը քաշեցի, բայց մի շաբթից յետոյ իմացայ

¹⁾ Բաղաբում։

²⁾ Շղթայակապ։

³⁾ Համախօսական։

բանն ինչու՞նք ա. գլուխ թակեցի, բայց էլ ինչ կարող էի անել:
 — Դէ էլ գլուխներդ ինչ ցաւացնեմ, — շարունակում է Կարապետը, — դուք ինքներդ էլ գիտէք, որ յետոյ Մաթոսը ուզեց մինչև անգամ շէնս իր վրայ հաստատի. ոնց մենք տանով, խիզանով գնացինք գբունատի ոտներն ընկանք, լաց եղանք, աղաչեցինք, պաղատեցինք, որ մեզ մի կերպ Մաթոսիցն ազատի: Ետնայ գբունատը ոնց մեր իշխաններին հաւաքեց, ուղարկեց բաղաբ ¹⁾ սարդարի կուշտը, որ գոնեա նա մեզ մի ճար անի: Դէ էլի սարդարն ապրած կենայ, տեսաք, որ նա մեզ եսիրութիւնից աղատեց:

— Բա՛, Աստուած սարդարին հաստատ պահի իր թախտի վրայ. նա մեզ Մաթոսից թափեց, թէ չէ մենք հիմա վաղ էինք կորել, — պատասխանում է Դաւիթը:

— Էլի մեղայ Մաթոսին, — կրկին շարունակում է Կարապետը, — նրանից մի անգամից պրծանք, աշանջնիս դինջացաւ, իսկ տեսնում էք, որ Սևունց եղին շարունակում է մեր աները քանդել ու մեր ծուխը կտրել: Սարին ինչքան խոտ կայ բոլորը մի բանի մարդակերերի ա տուել ու մեզ պէս բեասիք-քսուքին զրկել. ըսէ՛նց ա անում և հոգերը բաժանելիս, և հանդը ծախելիս, իսկ մենք հայվանի պէս մնում ենք էն կողմին կանգնած: Հիմա էլ էս ա օրս մի՞նում ա. տեսնում է՞ք նա լիս աշխարհ չի դուրս գալիս, թէ հետը խօսանք, մի բան մասլահաթ անենք. կորած ա, ով ա գիտում որ սև ատակի ա:

— Ո՛նց թա որ սև ատակի ա, — խօսում է Վտրանանց Թունին, — նա հիմա ստարշինի հետ միասին Սարգիս-բէգի ալաչուխում ոչխարի խորովածը գցած լաւ բէֆի վրայ ա: Նա որ այսօր եօթանասուն տարեկան պառաւ մարդ ա, շէնամիջից դուրս չի գալիս, հազար ու մի կեղտոտ բան ա բռնում ստարշինի ու շինի մեծերի խաթրն առնելու համար, հազար ու մի ուշուց ու ղէյբաթ ²⁾ ա լսում գիւղացոնց ահից, պատճառ նրա, որ պրիստաւ եկած ժամանակ ոչխարի համ ա տեսնում, սարին խոտերը կամ հոգերը բաժանելիս էլի ոչխար ա ճանգ գցում. կենդ-կենդ էլ, եթէ

¹⁾ Թեֆլիս:

²⁾ Բամբասանք:

այդ ձեռուքը գալիս է, շէնամիջի բազի ¹⁾ ա կուլ տալի ու
այդպիսով պորտը հաստացնում, — մի խօսքով այդ մարդը
միշտ իր մեռել-կենդանը բաշել ա տալիս միայն լափել ու
լակելու համար:

— Այ նա օձի միս լափի ու զահրումար լակի, բաւքի
նրան սպանի հա՛, — զայրացած ասում է Դաւիթը:

— Հրէս էգուց ոնց որի ա էստեղերը կերեսյ, — շա-
րունակում է Թունին, — որ շատ էստեղից, էնտեղից սկսե-
ցին նախատել, էլի կը սկսի ինքն իրան հայհոյել ու ասել,
Թէ մինչև մահս սհէ բանի էլ ես ձեռք չեմ տալ, իսկ եկող
տարին մէկէլ տեսար Նդին կրկին սարը խոտ բաժանելու ա
եկել: Ե՛հ հա դրա որն ասեմ, որը խոստովանեմ. դա չէ՛ր
որ մէկէլ տարին հազար ու մի փանդուփունդով սուտ պրի-
գովոր շինեց ու Պողոսանց Ջաքարին, որ ստարշին վախաւ
երեք հազար մանէթ շէնամիջի փող էր կերել, պրծացրեց:
Դեռ վերջը, դուք ինքներդ էլ այդ լաւ գիտէք, որ Ջաքա-
րը քիչ մնաց Նդիի գլուխը Թակի, 13 մանէթ միայն ընկաւ
այդ քեօփակի ճանկը: Ահր այդպիսի անասողաւորութիւն կը
լինի. ես աղիս նոքար ²⁾ տամ, ինքս գնամ հեռու արա-
նումը չոր բարին կրակ անեմ, փող աշխատեմ, որ յետոյ
այդ արին քրտինքով աշխատած փողերը Պողոսանց Ջաքարը
տանի իրա համար շհարումը ³⁾ աներ շինի, իսկ ես մնամ
սոված էն ղոլին կանգնած: Ահր էդ Աստուած վեր կունի,
էդ բոլորը Նդիի արարմունքը չի: Ադա՛, ադա՛, — դառնում
է նա իր փոքրիկ աղային, — գնա՛ մի կուէն աղբրից ջրով
լցրու, բեր խմենք, ծարաւ մեռայ:

— Լաւ էդ խեղճ երեխին ո՛ւր ես սարը բերել, միթէ՛
դա բան անող ա, — նկատում է Դաւիթը Թունիին:

— Ե՛հ, անըշինի մարդ, ինչ ես ասում, — պատասխա-
նում է Թունին, — էս օր էն օրն ա, որ փեաին փալաօ են
փաթաթում ու բանեցնում, նաքի Թա երեխին ուր ես բերել:

Միւս օրը վաղ առաւօտեան գիւղացիների մեծամասնու-
թիւնը իր «ղօբողը» վերջացրած սովորաբար սկսում է խո-

¹⁾ Փող:

²⁾ Ծառայ:

³⁾ Բազարում:

սի հունձը: Սարն այդ միջոցին մի առանձին կերպարանք է ստանում: Առաւօտեան արեգակը մի նոր կեանք ու կենդանութիւն է ներշնչում գործունեայ ու եռանդուն շինականին: Սար ու ձոր թնդացնում է նա իր երգերով, («հաղով»): Նրա գերանդիի զննգոցն ու թրլնփոցը («սամանն է» գնում: «Եսալիս Խնդիղ ա, Խնդիղ, 1) սրա նանը մեռնի, — ասում է նա իր գերանդիի մասին ու շարունակում եռանդով շարժել իր հալալ աշխատանքի այդ անմեղ զէնքը: Թէ բլուր, թէ ձոր ծածկուած են աշխատաւորների բազմութեամբ: Մի տեղ երեք-չորս ջանաթաթախ ջահիլներ բաս մաած 2), թեքերը մինչև արմուկները վեր բաշած, ոտքերն ամուր գետնին յենած ու միշտ կանգնած ամենայն արագութեամբ շարժում են գերանդիները մի աջ, մի ձախ ու ամեն մի շարժումով աշխարհ են տեղը նստացնում:»

— Նազար, հա՛, անունդ տափը չի գցես, հէրդ ու մէրդ 3) խեղճ են. նրանց ճարն ու իլլաջը դու ես, հէնց արա, որ Սողոմոնը առաջ չի ընկնի, — նկատում է նրանցից մէկը իր ընկերին:

— Արա՛, ա 2աա, Խնչ ես ասում: Մգամ՝ նազարը ճնց ա մեռել, որ Սողոմոնը նրա առաջն ընկնի. էս փափախը գլխիս հարամ չի ըլիլ, որ ըսէ բան պատահի՞, — պատասխանում է հպարտութեամբ Նազարը, շարունակելով եռանդով շարժել գերանդիին: — Հ՛ը, հ՛ը, Ե՛ ջան Ե՛ քե մատաղ, Խնդիղ, — անդադար կրկնում է նա:

— Նազար, հաւա մի վեր ունի 4), — նկատում է նրան Սողոմոնը, — 2աաին քեզ աչքով-ուրբով արաւ, ամա դա զաա չի շինիլ: Դու տղայ ես, մարդ ու մարդանայ հետս եկ: Բա իմ կերածը հարամ չի լինիլ, որ քեզ պէսը առաջս կարի:

— Է՛ս ա հրէս կերեայ, կերեա՛, ա՛ Սող, մէջ է մտնում 2աաին, — դու ըսէնց պեծին-կրակին մի անիր: Դեռ նոր ենք սկսել, զոչաղ ես դուրուր գալիս. հրէս միսհաթից

1) Անդլիացու շէնք:

2) Բաս մանեկ—մրցել:

3) Հայրդ ու մայրդ:

4) Մի պարծենար:

ետը կերևայ, թէ ում մէր տղայ կը բերի: Նաղար, հա-
քե մատաղ հա, Նաղար, Ինգլիզիդ լաւ ածոց արա՛, հա, ա-
ջան հա, ըտհէնց, ապրես,—բաջալերում է նա Նաղարին:

Ջահիլները շարունակում են եռանդով առաջ գնալ
ու իրար «ըռեխ կրծել»: Արեգակը կամաց-կամաց բարձ-
րանում է հորիզոնի վրայ, ձգելով իր ոսկեփայլ ճառա-
գայթները դէպի կանաչադարձ հովիտներն ու մարգագետին-
ները: Վերջիններս ծածկուած են առաւօտեան թանձր մա-
ռախուղով, որն արեգակի ազդեցութեան տակ, մաս-մաս
կծկուելով, այս կողմն այն կողմն է անհետանում: Չորերի
խորքերից երբեմն-երբեմն լսելի է լինում հովուի սրնգի կամ
նախընու պիտուի ձայնը, որը, միախառնուելով հարիւրաւոր
հնձողների աղաղակների ու երգեցողութեան հետ, լցնում
է օդը սքանչելի մեղեդիով:

Քիլիսադարի 1) առուի ափին նստած է մեր ծանօթ
Վարանանց Թունին: Գերանդին մի կողմ ձգած, ոտաբոբիկ
ու գլխաբաց, նա զբաղուած է տրեխ կարկատելով:

—Ա՛ Թուն, հէ՛ ա Թուն, Թունի,—կանչում է նրան
ձորի միւս կողմից Բազունց Կարապետը:

—Հէյ, Լ՛նչ կայ, խէր ըլի,—ձայն է ապիս Թունին:

—Ո՛նց թա ինչ կայ,— հարցնում է նրան զարմա-
ցած Կարապետը,—խի՞ ես ըտհէնց անմեղացել. մաջալ 2)
ես գտել, որ նստել ես տրեխ կարկատում, էս օր որ օր
ա՛: Ընկեր ես, դու էլ ինձ պէս բաժնիցը մաղբուն ես մնա-
ցել, եկ գնանք խոտ բաժանողի ետխիցը կախ լինենք, աչ-
քը հանենք ու խոտ պոկենք նրանից: Բա չուա որ օր պտի
նա մեր արինը ծծիլ, մենք խի իսան չենք:

—Արա՛, Կարապետ, գիժ չես, պել չես, եկ ինձ լսիր,
էդ զալմաղալէն հեռու կաց: Սևունց Նղին մեզ խոտ չի տալ
նհախ տեղայ մեր մեռելներն էլ քաշիլ կը տանք, էդ կը
լինի մեր աշխատանքը:

—Ո՞վ ա ասում, թա մեռելները քաշիլ կը տանք. դու
վեր կաց, չեմ-չեմ մի անի՛ր, տրեխներդ կեց: Էսօր որ ես
արին չանեմ, մգամ սիրտս կը հովանայ,—պատասխանում է

1) Եկեղեցաձոր:

2) Ժամանակ:

բարկութեամբ Կարապետը ու շարունակում շտապեցնել Թու-
նիին: Խեղճ Թունին ճարը կտրած տրեխները մի հանգա-
ռաներն է գցում ու Կարապետի հետ ճանապարհ է ընկնում
դէպի Գեօլի զրաղը, որտեղ այդ առաւօտ «լիս աշխարհ»
է դուրս եկել Սեուցն Եղին: Գեօլի զրաղին անբաւականե-
րի մի մեծ խումբ շրջապատել է Եղի ամուսն: Վերջինս գըլ-
խաբաց, փափախը կոնատակին դրած, կաշուէ բռնոթամանը
ձեռքին վիթխարի սեան պէս կանգնած է նրանց մէջ: Բո-
լորն էլ ձգձգում են նրա շորերը, բոլորն էլ խոտ ու բա-
ժին են պահանջում: Խեղճ Եղի ամին էլ չի իմանում, որին
պատասխանի, որին «քարսաղի»¹⁾ անի. բայց նա այդպիսի
ղալմաղալներում այնքան փորձուած է, այնքան ընկած-դուրս
եկած մարդ է, որ ոչ թէ միայն գլուխ չի կորցնում, այլ
դեռ «ըսելս էլ է ճղում»: Գիւղացիք տաքացած սաստիկ
բարձրաձէնում են, բայց Եղի ամին նրանց գերազանցում է:
Կարելի է ասել, որ նա շնորհիւ իր այդ ընդունակութեան
է այնպիսի նշանաւոր դեր խաղում Կաթնաշէնցոց «շէնա-
միջի» գործերում: Նրա ձայնը անհամեմատ հեռու է գնում:
Հնձողները, հեռուից լսելով Եղի ամու որոտոցը, երբեմն
ասում են՝ «չոռ, չոռ աս Եղ, ըշտա երբ պիտի քո ձայնը
այս սարէն կտրուիլ»: Բայց, չը նայելով գիւղացոց այդ չոռ
ու ցաւին, իւրաքանչիւր տարի այդ ժամանակ Եղի ամու
հզօր ձայնը էլի իւր նախկին վեհութեամբ «դրմբում է»
Գեօլի զրաղին: Ցարուայ ընթացքում Եղի ամին չէնամիջում
շատ է զալմաղալի ճանկ ընկնում, շատ է սրա, նրա հետ
«դաւի-դրաբայ» անում, բայց երբէք նա այնքան «բողաղ չի
ճղում», որքան խոտերի ժամանակ սարին:

— Ախպերք, դուք ինձանից ի՞նչ էք, — ասում է նա գիւ-
ղացիներին, — ես էլ ձեզ պէս մի ըռհաթ մարդ ըստեղ իմ
քեասիբութիւնին եմ եկել. գանգատ ունէք, գնացէք ձեր
ստարշիներն ըրէք, ձեր սուգիին ասացէք: Եկել էք պկիս չո-
քել, ուզում էք հոգիս առնել. ես կամ ի՞նչ իրաւունքի
տէր եմ ես, որ ձեզ քարսաղի անեմ: Ոնց մեծը նշանց է
տալիս, ես ընհէնց եմ բան բռնում, ընհէնց եմ բաժին
անում: Մեծի խօսքէն դուրս չեմ գալիս. ստարշինն ասում

¹⁾ Բաւականութիւն տայ:

ա. «Վեղ, էս բանն էսհէնց արան, ես էլ վեր եմ ունում նրա ըսածին անում: Դէ հմի դուք ի՞նչ էք երեսս կտրել. ի՞նչ էք հոգիս բողաղս հաւքել:»

— Հա՛ ես էդ անմեղ ջանիդ մատաղ, — հեգնութեամբ նկատում է նրան Բաղդուց կարապետը, — մեծի խօսքաւն ես գնում: Լաւ մեծը քեզ թաղի, մեծը քեզ ասել ա, թա գընա՛ բոլոր խոտերը շէնամիջի ղուրդերին տուր ու խեղճ, անձար, անիլլաջ ըռհաթին մաղբուն արա՛: Խի՞ չես հանգին բան բռնում, խի՞ չես մեղ հետ էլ մասլահաթ անում:

— Ի՞նչ, ի՞նչ. քեզ հետ մասլահաթ անեմ, քեզ հետ. չէս խի բանդուել ա, էլ մարդ չի կայ:»

— Բա ո՛ւմ հետ անես. եկ ինձ հարցրու, գնա Խալփանց Դաւթին հարցրու: Էն խի բա խարջը վեր դնելիս լո՛ւ խից առաջ՝ մեղ պէս քեասիբներին ես վեր դնում, պրիստաւ եկած ժամանակ զաղախին իր ձիով իմ տունս ես դոնաղ տալիս: Որ սովիստաւ բան բռնէիր, էսօր Սարգիս-բէգի թուրքերը խեղճ Դաւթին թաղիլ-կտրատիլ չէին, նրա գլուխն ու շորերը պատռոտիլ չէին:

— Հա հլէ սպանած պտին, — պատասխանում է Նիհամին, — նա խի ա գնում Յուրտ աղբրի ձորը, քանի որ ընտեղ բաժին չունի: Որ հախը հարցանես, նա իսկի մի ծեղ էլա չը պիտի ստանայ էս սարէն. նա քանի գլխանի ա, որ գնում ա Սարգիս-բէգի մարդկանց հետ հուջաթ ¹⁾ անո՛ւմ:

— Ո՞նց չի պիտի մի ծեղ էլա ստանալ, տնաքանդ, — երեսը արնաթաթախ ու պատռոտած շորերով առաջ է դուրս գալիս Խալփանց Դաւիթը, — խի՞ ես թագաւորի ըռհաթ չեմ, ես թագաւորին խարջ չեմ տալի՞: Ա՛ խալխը, — դառնում է նա գիւղացիներին, — բա էս Աստուած վեր կունի՞, էս տեսնուած ու լսուած բան ա՛, ձիւն ձմեռուանիս Յիրալովի հանդին սոված-ծարաւ անծող եմ արել, վայ էն հալին բսան մանէթ սաղացրել ու խարջս տուել: Հեռու ամառ էլ էս բեօփակն ու ստարշինը եկան պկիս չորեցին, թա ըլիլ չի, որ պէտք ա հէնց հիմա խարջը տաս ու տաս. աղաչեցի պաղատեցի, որ մի քիչ ժամանակ տան, տեսնամ ինչ հողն եմ գլխիս տալի, — զատ չի դառաւ. ճարս կտրեց, իմ աչքի

¹⁾ Վիճում:

լիս Զէյրան կովը հէնց էս բեօփակի վրայ կիսադնով ծախեցի ու խորջս տուայ. հմի Սեւունց Եղին ասում ա, թադեռ սպանած պտին:

— Սպանած պտին մի տակաւը, մին գլխաւը, — կրկնում է գայրացած Եղի ամին, — ես քեզ Յուրտ աղբրի ձոր եմ նշանց տուել, որ գնցել ես ընտել խոտ հնձելու, հը:

— Բա ինչ ես արել, բա ինչ ես արել. էս ինչ ա, — ցոյց է տալիս նա Եղի ամուն ծեղը, բաժանաթուղթը, — էս ինչ ես ձեռիս դրել: Ծեղումը Յուրտ աղբրի ճանպիտակը մեր բաժնի վրայ ես դնում, ճանպի գլխի ձորամիջի կատաղած խոտերը քո գիտացած մարդկանցը տալիս ու յետոյ նրանց սովըցնում, որ գան գլուխներս թակեն ու ճանպիտակն էլ ձեռներիցս խեփն:

— Սուտ ա, խաչաւաւետարանաւ որդիմ կուտեմ, որ սուտ ա. ճնպի տակն էլ, գլուխն էլ նրանց ա տուած, աչքերս կապիր մի, — ասում է Եղի ամին:

— Ո՞նց ա սուտ. ես չեմ գիր գիտում, տէր-Պետրոսի աղէն էլ չի գիտում, նա չի երէկ կշարներիս կարգաց: Դէ հմի էլ հաղուր հրէս Արշակն ա ըստեղ, թող սա էլ կարդայ. — ասում է Դաւիթը, դուրս քաշելով խմբից Արշակին:

— Արշակ, կարգա՛, Արշակ, կարգա՛, — ձայն են տալիս այս ու այն կողմից գիւղացիները:

Արշակը վերցնում է բաժանաթուղթը. «Աղաջանի տափերը, — կարգում է նա, — Այթալէն, Փխակի աղբիւրը, Կէնդ-գումի ձորի բողազը, Հանէսի աղի խմհատը, Բարսեղի իւրդը, Վանունց ծրըհափան հողի նիւնիլի ըռեվելը, Բիբունց խմհատի դուրս գցիլի ըռեվելը, գէնը հարերդայ չուայ Թրոսանց երկութեի ներքի եզնածիրը, Սերոբի կլատեղը ու ընտղա բռնած չուա Սահակի խոթարբը, Յուրտ աղբրի ճընպի տակը...»

— Ծնպի տակը, ճնպի տակը, — կրկնում են գիւղացիները, ընդհատելով Արշակի ընթերցանութիւնը: Բաղունց Կարապետը բարկացած մօտենում է Եղիին:

— Ա՛ր բեօփակ, դու մեր տները խի՞ ես քանդում, — ասում է նա, — մեզ քսան տանով Կալի հողումն ես մաղբուն արել, ըստեղ էլ էս խեղճին երեսուն տան հետ ես գցել ու ոչ թա մենակ առանց խոտ թող արել, այլ դեռ

Թակիլ էլ տուել: Ծեղողումը մի բան ես գրում, Սարգիս-բեգի թուրքերին ուրիշ բան սովորացնում ու գալիս մեր կշտին էլ դամար¹⁾ ըլում, (թա տեղովը սուտ ա. բա քեզ Աստուած չունիս, բա էն կապիտիցն²⁾ էլա վախում չէ՞ս:

— Ատա կապիտը քու գլխին փուշ գալ, — բարկացած գոռում է Եղի ամին, — նա խի էր ճնպի տակը գնում, որ թակուհի էն եքայ աշխարհը դրանց բաժնումը, դա կարաց ոչ ուրիշ տեղ վեր ունի՞:

— Ահա էն եքայ աշխարհը երեսուն տան ես տուել, մենակ նրանը չի: Ել ախիրը նրա պէս մի խեղճը ճնպի տակը չը պիտի գնար, էլ ախիրը նրա պէս մի խեղճը թակուհի չի պտէր: Դաւիթը ոնց անի, որ դու Սարգիս բեգի թուրքերին ասում ես. «Ծեղողումը ճնպի տակը նրանց եմ տուել, ամա ով գալ, տալ արած³⁾ գլուխը թակեցէք. Յուրտ աղբրի ձորը հարերդա Սարգիս-բեգինն ու ստարշի-նինն առ:

— Ատա թուրքերը դեռ քեզ էլ պտին թակած, քեզ էդ ի՞նչ ես խօսում. ո՞ւմ վրայ ես ըռեխ բաց անում: Դեռ եկ ձեռքս պաշի, որ քեզ Վալի հողն եմ ուղարկել:

— Ո՞ւմ ձեռ պաշեմ. քու ձեռը: Դու ոչ ըլես, ոչ. դու մեր շինէն իբի բաշը¹⁾ վերանաս. քու անունը միանգամից Աստուածանից կարուհի, քու:

— Ամէն, — վրայ են բերում գիւղացիները:

— Ամէն ցաւա գաք դուք, — բարկացած դառնում է դէպի նրանց Եղի ամին, — դեռ ամէն էլ ասում էք. էդա ձեր շնորհակալութիւնը: Ես տարին բութիւն ձեզ համար պրիստաւի, նաչալնիկի ու մրօվի սուդի դռներն ընկնեմ, գրռնա-

1) Ուրանում:

2) Երկնքից:

3) Սուտ կացած:

1) Յաւիտեանս:

տի ու ակոթման սուղի առաջին չբնութ անեմ, յօգուա հասարակաց երբեմն գլուխս թակել տամ, ետնայ դուք ինձ ըսհենց էլ ասէ՛ք:

—Ա՛յ ոչ ընկնես, փուչ ընկնես,—խօսում է վարանանց Թունին.—խի՞ ես ընկնում, բեզ ով ա խնդրում, թա սրա-նրա դռներն ընկի՛ Որ դու ըլես ոչ մեր շէնը կը դինջանայ, բեասիբի բեռը կը թեթեանայ. լաւ խեղճ ըռհա-թի տունը դու չես բանդո՞ւմ, հը՞:

—Այ իմ խէվ խելքէն, իմ խէվ խելքէն, որ ձեզ հետի բաշբաշ եմ ըլում: Էս էլ մի զալաթ էր, որ այս տարի ա-րի, Սարգիս բէգի ու սաարշինի խաթրը չը կոտրեցի: Ես խի ձեզ հետի խոտ բաժանեմ, խի հանդ բաժանեմ, խի մեծաւորների դռներն ընկնեմ: Ախպերք, բոլ էր, հերիք էր. օր էս ետը դուք ձեր եարին ¹⁾ դարման արէք. հօ՛, հօ՛. ես էլ շէնամէջ չեմ կոխիլ, ետեսս իբի բաշը ձեզանից թափում եմ, ետխի,—ասում է Եղի ամին ու թքոտելով հեռա-նում գիւղացիներից:

Վերլիններս այս այն կողմն են ցրւում: Նրանք դարձեալ անբաւական են: Եղի ամու փառաւոր հրաժարա-կանը նրանց չուրախացրեց. այդ խօսքերը Եղի ամուց նրանք առաջին անգամը չեն լսում: Եղի ամին տարուայ ընթաց-քում մի քանի անգամ թքոտում է ու զգուանքով «ետխի» անում, բայց էլի պրիստաւ եկած ժամանակը ձեռաց աղի առաջին բռնում է՝ իբրեւ շինի իշխան, ու այդպիսով միա-միտ արեւսաւորի կապը երբէք նրա ձեռքից չի ընկնում, է-լի թէ խոտ, թէ հանդ Եղի ամու ձեռքովն է անց կենում, էլի ամին բանում նրա մասն խառն է լինում:

Օրը շաբաթ է: Գիւղացիներից շատերը վերջացրել են խոտի հունձը, շատերը դեռ կիսել էլ չեն, նայած Եղի ամին ում ինչ բաժին է տուել: Իրիկնադէմին սարի ճանապար-

¹⁾ Վէրքին:

հը «ղլղլում է», թէ մեծ, թէ փոքր իրանց ճալուխ-չոլուխ-
խը» հաւաքած շտապում են առնն: Խոտ բարձած ձիաների
ու ջորինների բարաւաններին վերջ չը կայ: Չը նայած որ
գիւղացին միշտ մեծ սիրով ու խնամքով է վերաբերւում դէ-
պի իւր ամենահաւատարիմ ոգնականը, անասունը, բայց այդ
օրը նա ուշ չէ դարձնում նրա ծանր բեռան, շտապեցնում է,
ծեծում է մինչեւ անգամ խեղճին, որպէս զի «հրէական Ժա-
մին վրայ հասնի, հրէան Լուսաւորչի պատկերի առաջին լիս
կայցնի¹⁾» ու հրէան խաչ-աւետարան համբուրի»:

Օրհնելի սուի ²⁾ զառիվայրում ջորուն խոտ բարձած,
գերանդին ուսին դրած, գլուխը բաշ գցած դանդաղ բայ-
լերով գնում է ջորու ետեւից մեր ծանօթ Խալիանց Դաւի-
թը: Երբեմն-երբեմն միայն բարձրացնում է գլուխը,
«թող» անում ջորուն ու կրկին, ընկղմուելով իր մաքերի
մէջ, շարունակում լուռ ու մունջ բայլել: Նրա ետեւից ոչ
այնքան հեռու մի փայտ ձեռքին, մի ինչ որ եղանակ շվշուաց-
նելով, բոլորովին մենակ գնում տիրացու Արշակը. նկատելով
Դաւիթին, նա աւելացնում է բայլերը:

— Բարի երեկոյ, Դաւիթ ամի, — ասում է Արշակը,
հասնելով նրան:

— Այ՛ Լստուծու բարին բեզ, — պատասխանում է
Դաւիթը:

— Էը խոտ շտա հնձեցի՞ր:

— Է՛, որտեղից հնձեցի, տնաշէն: Էն օրը հու գու
ինքդ տեսար, ինչ հալի էի ես. ջարդուած, կտրատուած սաղ
օրը էլ կտրացի ոչ մասս բանի նի տամ: Էբսի օրը վայ էն
հալին գնացի Այթալէն. էնտեղ սրա, նրա աղաչանք անելով
կէնդ երկու բեռը խոտ հաւաքեցի:

1) Մոմ վառի:

2) Սեռ-լեռնադադաթ:

— Երկու բեռը, — հարցնում է զարմացմամբ Արշակը:
 — Երկու բեռը, հս'. մինն երէկի եմ տուն տարել,
 մինն էլ էս ա հմի եմ տանում:

— Բա ձմեռս առանց խոտի էդ ո՞նց պտես անի՞լ:

— Ոնց թա ո՞նց պտիմ անիլ. մի ջորի ունիմ, մնեւ մի
 կով. ընել Սևունց Եղին կիսաբնով ծախել կը տայ ու ես
 խես կը թափի նրանցից, ոնց պտեմ անիլ, ա՛քե մատաղ,
 — պատասխանում է Դաւիթը ու կրկին լռութեան մէջ ըն-
 կղմւում: — Թո՛շ, թո՛շ, — երբեմն միայն ձայն է տալիս նա:

Մտեփառ Ահետիքեան.